



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 նոյեմբերի 2021 թվականի թիվ 193-Ա

ք. Երևան

«ՅՈՒՔՈՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 04-Ի ԹԻՎ 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՍ ԲԵՐՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 10-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը՝ *սյարզեց*.

«ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ ցանցային օպերատոր) վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 04-ի «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 176-Ա որոշման (այսուհետ՝ վարչական ակտ) դեմ:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքում մասնավորապես նշված է, որ Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) իրեն վերապահված վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ մասնավորապես 2021 թվականի հոկտեմբերի 07-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության վերահսկողության բաժնի պետի կողմից ցանցային օպերատորի հեռարձակող կայանում իրականացված դիտարկման արդյունքում հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության կողմից «HBO», «CTB», «FashionHD», «THT», «TV 3», «Пятница», «Vmedia», «Vmedia +» տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահադորդում իրականացնելու Օրենքի պահանջի խախտում և վերոնշյալ դիտարկման արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 07-ին կազմվել է համապատասխան արձանագրություն:

Վարչական բողոքում նշված է նաև, որ Հանձնաժողովն ուսումնասիրելով 2021 թվականի հոկտեմբերի 07-ին իր նախաձեռնությամբ ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 58 վարչական վարույթի նյութերը 2021 թվականի նոյեմբերի 04-ին կայացրել է թիվ 176-Ա որոշումը, որով ցանցային օպերատորին տուգանել է 14 003 200 ՀՀ դրամի չափով:

Ըստ ցանցային օպերատորի, վարչական վարույթի ընթացքում իրենց կողմից ներկայացվել են խնդրո առարկա «ТНТ», «TV 3», «Пятница» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման վերաբերյալ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔՔ» ՍՊ ընկերության հետ կնքված (ուժի մեջ է) պայմանագրերը, մինևույն ժամանակ Հանձնաժողովին տեղեկացրել են, որ այդ տեսալսողական ծրագրերի այժմյա դիստրիբյուտոր հանդիսացող «ՀԻՖՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության հետ 01. 09. 2021 թվականին կնքել են նախնական պայմանագիր, որով ստացել են նշված ծրագրերի վերահաղորդման իրավունք և Հանձնաժողովին ներկայացրել են այդ պայմանագրի լուսապատճենը, ինչպես նաև վարույթի ընթացքում Հանձնաժողովին ներկայացրել են «Vmedia», «Vmedia +» տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի՝ «ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության համաձայնությունն առ այն, որ ցանցային օպերատորն իրավունք ունի վերահաղորդել վերոնշյալ տեսալսողական ծրագրերը:

Ցանցային օպերատորն իր վարչական բողոքում անդրադառնալով արձանագրությունում և վարչական ակտում ամրագրված այն հանգամանքին, որ ցանցային օպերատորի կողմից առանց համապատասխան իրավական հիմքի (պայմանագրի) վերահաղորդվում են «CTB» և «HBO» տեսալսողական ծրագրերը, տեղեկացրել է, որ «CTB» տեսալսողական ծրագիր ցանցային օպերատորը, թե արձանագրությունը կազմելիս (դիտարկումն իրականացնելիս) և թե այժմ չի վերահաղորդել (և չի վերահաղորդում), ուստի գտնում են, որ արձանագրությունում առկա է սխալ և ըստ ամենայնի խոսքը վերաբերում է ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող «ԼԻԵՄ» տեսալսողական ծրագրին, որի վերահաղորդման վերաբերյալ ցանցային օպերատորի և «ТВ ЦЕНТР» բաժնետիրական ընկերության միջև 01. 01. 2021 թվականին կնքվել է համապատասխան պայմանագիր, որը գործում է մինչև 31. 12. 2021 թվականը և նշված պայմանագրի առկայության մասին ցանցային օպերատորը Հանձնաժողովին տեղեկացրել է 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Ելք-2103 գրությանը կից ներկայացված փաստաթղթում (ցանկի 1-ին տողը): Վարչական բողոքին կից ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացվել է «ТВ ЦЕНТР» ընկերության հետ կնքված պայմանագրի լուսապատճենը:

Ցանցային օպերատորը նշել է նաև, որ «HBO» տեսալսողական ծրագրի մասով արձանագրությունում ևս առկա է վրիպակ, քանի որ ցանցային օպերատորի կողմից «HBO» տեսալսողական ծրագիր երբևէ չի վերահաղորդվել և այժմ էլ չի վերահաղորդվում, այլ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում է «Amedia Premium HBO» տեսալսողական ծրագիրը (որը մտնում է «HOME OF HBO» միջազգային ընտանիքի մեջ), որի վերահաղորդման իրավունքի տրամադրման իրավասությունը պատկանում է «А сериал» ՍՊ ընկերությանը («А сериал» ՍՊ ընկերության պաշտոնական կայքէջը՝ amediatv.ru/about/), ինչպես նաև նշված ընկերությանն է պատկանում «A1», «A2», «A1 HD», «A2 HD», «Amedia Hit HD» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման իրավասությունը:

Ցանցային օպերատորը հայտնել է նաև, որ ցանցային օպերատորի և «А сериал» ՍՊ ընկերության միջև 01. 06. 2019 թվականին կնքված ոչ բացառիկ լիցենզիոն

պայմանագրի (և դրա հիման վրա վերոնշյալ տեսալսողական ծրագրերի վերահաղորդման) մասին ցանցային օպերատորը Հանձնաժողովին տեղեկացրել է 22. 10. 2021 թվականի ԵԼՔ-2103 գրությանը կից ներկայացված փաստաթղթում (ցանկի 158-ից 163-րդ տողերը): Վարչական բողոքին կից ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացվել են նաև «А сериал» ՄՊ ընկերության հետ կնքված պայմանագրի, դրա բաղկացուցիչ մասը կազմող 01. 04. 2020թ-ին և 01. 06. 2021թ-ին կնքված լրացուցիչ համաձայնագրերի և «А сериал» ընկերության կայքէջի լուսապատճենները:

Վարչական բողոքում համադրելով փաստերը, ցանցային օպերատորը գտնում է, որ Հանձնաժողովի 04. 11. 2021 թվականի թիվ 176-Ա որոշումն անհիմն է և ենթակա է անվավեր ճանաչման վարչական բողոքում նշված հիմնավորմամբ:

Ցանցային օպերատորը վարչական բողոքով խնդրում է անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 04-ին ընդունած վարչական ակտը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ի մասի բ) կետը:

Ի լրումն 2021 թվականի նոյեմբերի 10-ին Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքի, ցանցային օպերատորի կողմից 2021 թվականի նոյեմբերի 10-ին ներկայացվել է նաև վարչական բողոքում առկա վրիպակի վերաբերյալ դիմում, որով խնդրել են վարչական բողոքի կազմման ամսաթիվ համարել բողոքը Հանձնաժողով ներկայացնելու ամսաթիվը՝ 2021 թվականի նոյեմբերի 10-ը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 04-ի թիվ 176-Ա որոշման դեմ բերված վարչական բողոքն ընդունել է վարույթ, քանի որ վարչական բողոքը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածների պահանջներին:

Հանձնաժողովը 2021 թվականի նոյեմբերի 11-ին ծանուցել է ցանցային օպերատորին վարչական բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով և հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 07-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ

հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց՝ 2021 թվականի հոկտեմբերի 07-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է թիվ 58 վարչական վարույթը:

Վարչական վարույթը հարուցվել էր ցանցային օպերատորի կողմից մի շարք տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելու Օրենքի պահանջի խախտման փաստով:

Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 46-Ա հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և արձանագրել է, որ 2021 թվականի հոկտեմբերի 07-ին ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը՝ 13:00-ից մինչև ժամը՝ 14:30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են թվով 202 տեսալսողական ծրագրեր, որոնց թվում նաև խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերը: Արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից 2021 թվականին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերի համադրության արդյունքում պարզվել էր, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են մի շարք տեսալսողական ծրագրեր, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկից: Սակայն, վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հոկտեմբերի 22-ին ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի նոր ցանկերի և տեղում դիտարկման արդյունքներով կազմված արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի կրկնակի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել էր, որ ցանցային օպերատորն առանց իրավական հիմքերի (պայմանագրերի) վերահաղորդում է «HBO», «CTB», «Fashion HD», «THT», «TV 3», «Пятница», «Vmedia», «Vmedia +» տեսալսողական ծրագրերը՝ խախտելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված թիվ 58 վարչական վարույթի եզրափակիչ փուլը (վարչական ակտի ընդունումը) կայացել է 2021 թվականի նոյեմբերի 04-ին և անցկացված վարչական վարույթի քննարկման նիստին վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ ցանցային օպերատորի ներկայացուցիչները ներկայացրել են իրենց բացատրությունները, ինչպես նաև Հանձնաժողովին ներկայացրել են «THT», «TV 3», «Пятница» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման տրամադրման վերաբերյալ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵԹ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրերը և նաև տեղեկացրել են, որ նշված տեսալսողական ծրագրերի այժմյա դիստրիբյուտորի՝ «ՀԻԲԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության հետ և «Vmedia», «Vmedia +» տեսալսողական

ծրագրերի դիստրիբյուտորի՝ «ՎԻՎԱՌՈՒ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության հետ պայմանագրեր կնքելու նախնական համաձայնություն է ձեռք բերվել:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել էին վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը, պայմանագրերը և ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն ընդունել էր օրինական հիմքով ներկայացված պայմանագրերը, սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ տեղում դիտարկման արդյունքում պարզվել էր, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվել են «HBO», «CTB» տեսալսողական ծրագրերը, իսկ վարչական վարույթի և քննարկման ընթացքում ցանցային օպերատորի կողմից «HBO», «CTB» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը չէին ներկայացվել, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել էր, որ խախտվել է Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և առանց պայմանագրերի վերահաղորդում իրականացնելու հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ կիրառել էր Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով 14 003 200 (տասնչորս միլիոն երեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով:

Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է՝ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հանձնաժողովը վարչական ակտն ընդունելիս հաշվի էր առել նաև այն հանգամանքը, որ ցանցային օպերատորի կողմից Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասով և 60-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ տեղեկությունները Հանձնաժողով ներկայացվել են միայն վարչական վարույթի ընթացիկ փուլում (2021 թվականի հոկտեմբերի 22-ին), իսկ տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը (պայմանագրերը) ներկայացվել են եզրափակիչ փուլում՝ վարչական ակտի ընդունման ժամանակ (2021 թվականի նոյեմբերի 04-ին), հետևաբար վարչական ակտով ցանցային օպերատորը նաև նախազգուշացվել էր՝ իր ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ողջամիտ ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:

Նշենք նաև, որ վարչական վարույթի շրջանակներում խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ ապացույցներ ձեռք չեն բերվել, ուստի Հանձնաժողովի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 07-ին ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը վարչական վարույթի շրջանակներում ծառայել է որպես վարչական վարույթի ապացույց (Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մաս) և հիմք է հանդիսացել 2021 թվականի նոյեմբերի 04-ին վարչական ակտի ընդունման համար:

Ուստի, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում՝ վարչական իրավախախտման հիմքով, Հանձնաժողովը 2021 թվականի նոյեմբերի 04-ին ընդունել է «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱԽԱՒՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 176-Ա որոշումը:

Հանձնաժողովը որպես վարչական մարմին վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդված):

Հանձնաժողովը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտավորությունն իրականացնելով՝ վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակցին հնարավորություն է տվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրավաչափ վարչարարություն, իսկ ընդունված վարչական ակտն ընդունվել է Օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ և իրավաչափ է:

Սակայն, ցանցային օպերատորի կողմից 2021 թվականի նոյեմբերի 10-ին վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքով խնդրո առարկա հանդիսացող «CTB» և «HBO» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման վերաբերյալ ներկայացվել են նոր փաստեր և լրացուցիչ ապացույցներ (պայմանագրեր), որոնք ըստ ցանցային օպերատորի վկայում են վերջինիս կողմից իրավախախտման փաստի բացակայության մասին:

Հանձնաժողովի կողմից վարչական բողոքի հիման վրա ուսումնասիրվել են ներկայացված նոր փաստերը և լրացուցիչ ապացույցները, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ներկայացված լրացուցիչ ապացույցներով հիմնավորվում է այն փաստը, որ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում չի իրականացվել և Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում առկա չէ:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացրած ապացույցներով, Հանձնաժողովն ընդունում է վարչական բողոքով «CTB» և «HBO» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման մասով ներկայացված փաստարկները, ինչպես նաև օրինական հիմքով ներկայացված վերահաղորդման իրավական հիմքերը (պայմանագրերը) և ամրագրում է, որ վարչական բողոքը ենթակա է բավարարման, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Սակայն, Հանձնաժողովն ամրագրում է նաև, որ Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասով և 60-րդ հոդվածի 8-րդ մասով ցանցային օպերատորների համար պարտավորություն է սահմանված՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ Հանձնաժողովին տեղեկացնել, իսկ տվյալ դեպքում լիցենզիա ստացած ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր էր պահպանել Օրենքի վերոնշյալ դրույթների պահանջները և իր ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ տեղեկությունը Հանձնաժողով ներկայացնել ժամանակին, որը չի պահպանվել: Ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և փոփոխության վերաբերյալ տեղեկությունը Հանձնաժողով ներկայացվել էր միայն վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հոկտեմբերի 22-ին, ինչի մասին վարչական բողոքում նշել է նաև ցանցային օպերատորը: Ավելի ուշ, վարչական ակտի ընդունման ժամանակ (եզրափակիչ փուլ)՝ 2021 թվականի նոյեմբերի 04-ին, ցանցային օպերատորը ներկայացրել է նաև խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերի մի մասի վերահաղորդման իրավական հիմքերը (պայմանագրերը):

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասով և 60-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դրույթների պահանջները և Օրենքի նշված դրույթներով պահանջվող տեղեկությունը Հանձնաժողով ներկայացնել ժամանակին, որը ցանցային օպերատորի կողմից չի պահպանվել:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ

մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Իսկ Օրենքի 56-րդ հոդվածով սահմանված է՝ սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով սահմանված է. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:»

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

Որպես կանոն, վարչական ակտն անվավեր է ճանաչվում ամբողջությամբ:

Վարչական ակտը մի մասով անվավեր կարող է ճանաչվել, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Եթե վարչական ակտն անվավեր է ճանաչվել մի մասով, ապա սույն հոդվածի կանոնները կիրառվում են միայն դրա անվավեր ճանաչված մասի նկատմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս

առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ:

Այսպիսով, Հանձնաժողովն առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացված նոր փաստերով ու լրացուցիչ ապացույցներով, ցանցային օպերատորի նկատմամբ ընդունում է նոր վարչական ակտ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 56-րդ հոդվածի, 60-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը, 63-րդ հոդվածի 5-րդ մասը, 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 76-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերության կողմից Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 04-ի թիվ 176-Ա որոշման դեմ բերված վարչական բողոքը՝ ընդունելով նոր վարչական ակտ:

2. «ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում՝ իր ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ողջամիտ ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 04-ի ««ՅՈՒՔՈՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 176-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

S. ՀԱԿՈԲՅԱՆ

26 նոյեմբերի 2021թ.

ք. Երևան